«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017 թ. դեկտեմբերի 26-ի թիվ 28 նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհուրդը այսուհետ ԵՊՀ ԻՄ տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որը ձևավորվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:
2. Խորհրդի նպատակներն ու խնդիրներն են՝
   ա/ աջակցել ԵՊՀ ԻՄ գիտական գրադարանի ռազմավարական զարգացմանը և դրանից բխող տարբեր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
   բ/ քննարկել ԵՊՀ ԻՄ գիտական գրադարանի գործունեության տարեկան ծրագրերն ու դրանց կատարման մասին հաշվետվությունները,
   գ/ ապահովել գրադարանի և մասնաճյուղի հիմնական ուսումնական և գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունը:
3. Խորհրդի նախագահը ԵՊՀ ԻՄ տնօրենն է: Խորհուրդն իր կողմից ընտրում է խորհրդի քարտուղար:
4. Խորհրդի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության ԵՊՀ ԻՄ տնօրենի կողմից տարեկան առնվազն երկու անգամ:
5. Խորհրդի կազմի մեջ են մտնում տնօրենը, գիտական խորհրդի քարտուղարը, գրադարանի վարիչը, մասնաճյուղի աշխատակազմի ղեկավարը, ուսումնամեթոդական վարչության պետը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների խորհուրդների կողմից առաջարկված թեկնածուները, գրադարանի կոլեկտիվի ներկայացուցիչները, գրադարանի աշխատակիցների ժողովի կողմից առաջարկված ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչներ:
6. Խորհրդի կազմը հաստատվում է ԵՊՀ ԻՄ տնօրենի կողմից՝ երկու տարի ժամկետով, ֆակուլտետների խորհուրդների կողմից առաջարկված անձանց ցանկից Խորհրդի անդամների ընտրությունն իրականացվում է տնօրենի կողմից:
7. Խորհրդում որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Խորհրդի նիստներն արձանագրվում են, արձանագրության վարումը կազմակերպում է գրադարանային խորհրդի քարտուղարը:
8. Տնօրենի հրավերով խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով մշտական կամ ժամանակավոր հիմունքներով կարող են մասնակցել համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող մասնագետներ: